**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ԲՊԱԷՀԱ-ՄԱ-ԾՁԲ-18/1**

ք. Երևան <<26>> <<04>> 2018 թ.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Հ.Թադևոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Իվան Վարդանյան Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Իվան Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի **N 1 և N 1.1 հավելվածներով** սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է առավելագույնը **328 800 (երեք հարյուր քսանութ հազար ութ հարյուր ) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային րտավորությունները լրիվ կատարելուց:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավոր[illegible] նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներն բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց
էթիկայի հանձնաժողովի աշխատակազմ
ք., Երևան, Բաղրամյան 24
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011019057
ՀՎՀՀ 00171676
Աշխ.ղեկավար

**Հ.Թադևոսյան**---------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Իվան Վարդանյան Ա/Ձ
ք.Սիսիան, փ.Որոտան 4 բ /33
<<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ
հ/հ 16031005222200
ՀՎՀՀ 79809022
Տնօրեն

**Ի.Վարդանյան**---------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պ[illegible] կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*<<      >>      <<      >>      2018 թ. կնքված*
***ԲՊԱԷՀԱ-ՄԱ-ԾՁԲ-18/1*** *ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50111130/1 | ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | Դրամ | 328 800 | 1 | Ք.Երևան, Բաղրամյան 24 | 15.12.2018թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Բարձրաստիճան պաշտոնատար անձանց
էթիկայի հանձնաժողովի աշխատակազմ
ք., Երևան, Բաղրամյան 24
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011019057
ՀՎՀՀ 00171676
Աշխ.ղեկավար

**Հ.Թադևոսյան**-----------------
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
Իվան Վարդանյան Ա/Ձ
ք.Սիսիան, փ.Որոտան 4 բ /33
<<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ
հ/հ 16031005222200
ՀՎՀՀ 79809022
Տնօրեն

**Ի.Վարդանյան**-----------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
<< 25 >> << 04 >> 2018 թ. կնքված
**ԲՊԱԷՀԱ-ՄԱ-ԾՁԲ-18/1** ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **հրավերով նախատեսված չափաբաժնի համարը** | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/1 | ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | - | - | - | - | 98 640 | 131 520 | 164 400 | 197 280 | 230 160 | 263 040 | 295 920 | 328 800 | **328 800** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմ
ք., Երևան, Բաղրամյան 24
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011019057
ՀՎՀՀ 00171676
Աշխ.ղեկավար.

**Հ.Թադևոսյան**
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
Իվան Վարդանյան Ա/Ձ
ք.Սիսիան, փ.Որոտան 4 բ /33
<<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ
h/h 16031005222200
ՀՎՀՀ 79809022
Տնօրեն

**Ի.Վարդանյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
<< 25 >> << 04 >> 2018 թ. կնքված
ԲՊԱԷՀԱ-ՄԱ-ԾՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

**Պայմանագրի կողմ**
Իվան Վարդանյան Ա/Ձ
ք.Սիսիան, փ.Որոտան 4 բ /33
<<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ
h/h 16031005222200
ՀՎՀՀ 79809022

**Պատվիրատու**
Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմ
ք., Երևան, Բաղրամյան 24
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011019057
ՀՎՀՀ 00171676

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« « 2018 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «25 «04 2018 թ.
Պայմանագրի համարը՝ ***ԲՊԱԷՀԱ-ՄԱ-ԾՁԲ-18/1***
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « և « և 2018 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_______________________
ստորագրություն
_______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_______________________
ստորագրություն
_______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«25» «04» 2018 թ. կնքված
**ԲՊԱԷՀԱ-ՄԱ-ԾՁԲ-18/1** ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) և Իվան Վարդանյան Ա/Ձ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2018 թ. ___ ____ ____ ____ ____-ին կնքված N **ԲՊԱԷՀԱ-ՄԱ-ԾՁԲ-18/1** գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2018 թ. ____ __-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
| --- | --- | --- |
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

Հավելված 1.1
«25» «04» 2018 թ. կնքված
ԲՊԱԷՀԱ-ՄԱ-ԾՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները | Չափաբաժին 1<br>TOYOTA COROLLA 2011-2012 |
|---|---|---|
| 1 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 5000 |
| 2 | Արգելակման համակարգի աշխատանքի ստուգում | 2000 |
| 3 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 2000 |
| | **1.Շարժիչ** | |
| 4 | Շարժիչի հանում և տեղադրում | 96000 |
| 5 | Շարժիչի արատավորում | 5000 |
| 6 | Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | 192000 |
| 7 | Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով | 72000 |
| 8 | Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով | 72000 |
| 9 | Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտարարներով 1 կ-տ | 1200 |
| 10 | Վառոցքի մոմի բնիկի նորոգում | 5000 |
| 11 | Շարժիչի փականների զսպանակների փոխարինում | 1000 |
| 12 | Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ | 24000 |
| 13 | Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ | 4800 |
| 14 | Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում | 6000 |
| 15 | Ծնկաձև լիսեռի հղկում | 9600 |
| 16 | Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում | 2400 |
| 17 | Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ | 2400 |
| 18 | Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում | 2400 |
| 19 | Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում | 2400 |
| 20 | Ծնկաձև լիսեռի ուղղում | 1000 |
| 21 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 24000 |
| 22 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 6000 |
| 23 | Շարժիչի բլոկի փոխարինում | 1000 |
| 24 | Մխոցի փոխարինում 1 հատ | 1000 |
| 25 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում | 6000 |
| 26 | Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում | 1200 |
| 27 | Բաշխիչ լիսեռի խտարարի փոխարինում | 600 |
| 28 | Շարժիչի շղթայի փոխարինում | 6000 |
| 29 | Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում) | 12000 |
| 30 | Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով | 1000 |
| 31 | Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում | 1000 |
| 32 | Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով | 20000 |
| 33 | Շարժիչի յուղի մղիչի փոխարինում | 2400 |
| 34 | Շարժիչի յուղի մղիչի մաքրում | 6000 |
| 35 | Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում | 1200 |
| 36 | Օդաքաշակ փողրակի փոխարինում | 2400 |
| 37 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 12000 |
| 38 | Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում | 1000 |
| 39 | Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում | 2400 |

| | | |
|---|---|---|
| 40 | Թափանիվի առանցքակալի փոխարինում | |
| 41 | Շարժիչի կափույրի փոխարինում | |
| 42 | Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ | |
| 43 | Միացական օղակների փոխարինում 1 կ-տ | |
| 44 | Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում | |
| 45 | Ատամնանիվի փոխարինում | |
| 46 | Շարժիչի հանդարտիչի փոխարինում | |
| 47 | Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում | |
| 48 | Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով | |
| 49 | Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում | |
| 50 | Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում | |
| 51 | Շարժիչի քիմիական լվացում 1 կտորը | |
| 52 | Շարժիչի քիմիական լվացում ընդհանուր | |
| 53 | Կափույրների հղկում 1 հատը | |
| 54 | Կափույրի բնիկի նորոգում /գնեցոր/ | |
| 55 | Պարագիծ լիսեռի հղկում և վռանի տեղադրում | |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | |
| 56 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 3 |
| 57 | Ավտոմեքենայի հանգույցների յուղում | 2 |
| 58 | Համակարգչային ախտորոշում | 7 |
| 59 | Յուղի ռադիատորի փոխարինում | 9 |
| 60 | Յուղի ռադիատորի նորոգում | 9 |
| 61 | Շարժիչի կոլեկտորի փոխարինում | 9 |
| 62 | Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ | 36 |
| 63 | Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում | 60 |
| 64 | Օդի զտիչի փոխարինում | 24 |
| 65 | Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 360 |
| 66 | Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 100 |
| 67 | Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում | 240 |
| 68 | Ինժեկտորի բոցամուղերի մաքրում | 240 |
| 69 | Բոցամուղի կոդավորում | 180 |
| 70 | Ինժեկտորի բոցամուղի խտաքուղերի փոխարինում | 10 |
| 71 | Բենզամղիչի փոխարինում | 80 |
| 72 | Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 36 |
| 73 | Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 60 |
| 74 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 240 |
| 75 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում | 100 |
| 76 | Վառելիքի բաքի մաքրում | 60 |
| 77 | Օդի ծախսի տվիչի փոխարինում | 20 |
| 78 | Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում | 20 |
| 79 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում | 10 |
| 80 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում | 12 |
| 81 | Յուղի ճնշման տվիչի փոխարինում | 24 |
| 82 | Տվիչի փոխարինում | 36 |
| 83 | Ակսելատորի փոխարինում կամ նորոգում | 24 |
| 84 | Օդացրիչի հրանի փոխարինում | 24 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | |
| 85 | Հովհարի փոխարինում | 60 |
| 86 | Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում | 144 |
| 87 | Ռադիատորի նորոգում | 240 |

| | | |
|---|---|---|
| 88 | Ընդարձակող բաքի փոխարինում | 3600 |
| 89 | Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում | 600 |
| 90 | Ջրի ծորակի փոխարինում | 6000 |
| 91 | Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում | 3000 |
| 92 | Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 4800 |
| 93 | Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված | 42000 |
| 94 | Վառարանի շարժիչի փոխարինում | 9600 |
| 95 | Թերմոստատի փոխարինում | 9600 |
| 96 | Ջրի մղիչի փոխարինում միջադիրով | 21600 |
| 97 | Գեներատորի փոկի փոխարինում | 6000 |
| 98 | Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում | 4800 |
| 99 | Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում | 9600 |
| 100 | Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում | 600 |
| 101 | Խլարարի անուրի (хамут) փոխարինում | 600 |
| 102 | Խլարարի ներդիրի փոխարինում | 600 |
| 103 | Խլարարի կախոցի փոխարինում | 600 |
| 104 | Հովացման հեղուկի փոխարինում | 4800 |
| 105 | Կոնդիցիոների լիցքավորում | 18000 |
| 106 | Կոնդիցիոների յուղի ավելացում | 1000 |
| 107 | Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում | 7200 |
| 108 | Կոնդիցիոների ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 2400 |
| 109 | Կոնդիցիոների առանցքակալի հանում և տեղադրում | 12000 |
| 110 | Կոնդիցիոների ռադիատորի հանում և տեղադրում | 9600 |
| 111 | Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում | 600 |
| | **4. ՓՏ** | |
| 112 | ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | 216000 |
| 113 | ԱՓՏ-ի փոխարինում | 60000 |
| 114 | ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում | 2400 |
| 115 | ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում | 12000 |
| 116 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում | 12000 |
| 117 | ԱՓՏ-ի յուղի փոխարինում | 5000 |
| 118 | ԱՓՏ-ի զտիչի լվացում, մաքրում՝ քարտերի հանում և տեղադրումով | 35000 |
| | **7. Կախոց** | |
| 119 | Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում | 42000 |
| 120 | Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում կամ փոխարինում | 8000 |
| 121 | Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 8000 |
| 122 | Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | 12000 |
| 123 | Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | 12000 |
| 124 | Ձախ կամ աջ հողակալի փոշեթիկնոցի փոխարինում | 1200 |
| 125 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | 2000 |
| 126 | Առջևի զսպանակի փոխարինում | 5000 |

| | | | |
|---|---|---|---|
| 127 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 1[illegible] |
| 128 | Հարվածամեղմիչի վռանների փոխարինում | | 360 |
| 129 | Մեղմիչի ամրացման կալունակի փոխարինում | | 12 |
| 130 | Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 120 |
| 131 | Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ | | 60 |
| 132 | Ներքևի լծակի հեղույսի փոխարինում | | 240 |
| 133 | Հարվածիչի (բարձիկի փոխարինում) | | 240 |
| 134 | Գնդե հոդակապերի պատյանի փոխարինում | | 100 |
| 135 | Գնդե հոդակապերի փոխարինում | | 840 |
| 136 | Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 600 |
| 137 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | | 480 |
| 138 | Հետևի կայունարարի վռանների փոխարինում | | 480 |
| 139 | Կայունարարի կալունակի փոխարինում | | 120 |
| 140 | Հետևի զսպանակների փոխարինում | | 240 |
| 141 | Հետևի ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 6000 |
| 142 | Հետևի ցնցամեղմիչի փոխարինում | | 7200 |
| 143 | Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում | | 2400 |
| 144 | Անվակունդի դարձույի կանգնակի փոխարինում | | 3600 |
| 145 | Աջ կամ ձախ դարձկեն լծակի փոխարինում | | 9600 |
| 146 | Անվակունդի առանցքակալների բացակի կարգավորում | | 2400 |
| | **8. Ղեկային մեխանիզմ** | | |
| 147 | Ղեկասյունակի հիմնական նորոգում, | | 75000 |
| 148 | Ղեկասյունակի(ՄՏսՏՎՄՈ) խաչուկների փոխարինում | | 6000 |
| 149 | Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում | | 1200 |
| 150 | Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում | | 9600 |
| 151 | Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները | | 24000 |
| 152 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 3600 |
| 153 | Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում | | 9600 |
| 154 | Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում | | 7200 |
| 155 | Ղեկային ձողի գնդե հոդակապի նորոգում | | 6000 |
| 156 | Ղեկային ձգաձողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում | | 4800 |
| 157 | Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում | | 2000 |
| 158 | Ղեկային ձգաձողի ծայրակալների փոխարինում | | 3200 |
| 159 | Հիդրոուժեղարարի յուղի տարայի փոխարինում | | 2400 |
| 160 | Արորիկի և որդնակի առանցքների մեջ բացակների կարգավորում | | 2400 |
| 161 | Հիդրոուժեղարարի փոկանիվի փոխարինում | | 2400 |
| | **9. Արգելակային համակարգ** | | |
| 162 | Վակումային ուժեղարարի փոխարինում | | 14400 |
| 163 | Վակումային ուժեղարարի նորոգում | | 7200 |

| | | | |
|---|---|---|---|
| 164 | Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 6000 |
| 165 | Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով | | 2400 |
| 166 | Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 6000 |
| 167 | Աշխատանքային գլանի հիմնական նորոգում, | | 1200 |
| 168 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 7200 |
| 169 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 7200 |
| 170 | Առջևի սուպպորտի վերանորոգում | | 2500 |
| 171 | Հետևի սուպպորտի վերանորոգում | | 2500 |
| 172 | Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում | | 7200 |
| 173 | Արգելակային փողրակի փոխարինում | | 6000 |
| 174 | Արգելակային կոճղակների փոխարինում | | 1500 |
| 175 | Արգելակային համակարգի օդահանում | | 3600 |
| 176 | Սկավառակային կոճղակների փոխարինում | | 6000 |
| 177 | Թմբուկային կոճղակների փոխարինում | | 7200 |
| 178 | Հետևի արգելակային թմբուկների փոխա. | | 6000 |
| 179 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | | 9600 |
| 180 | Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ | | 7200 |
| 181 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | | 9600 |
| 182 | Հետևի արգելակային թմբուկի հղկում 1հատ | | 6000 |
| 183 | Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում | | 3600 |
| 184 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 12000 |
| 185 | Հետևի արգելակների կարգավորում | | 2400 |
| 186 | Արգելակային համակարգի լվացում | | 1800 |
| 187 | Արգելակային հեղուկի փոխարինում | | 1800 |
| | **10. Էլեկտրասարքավորում** | | |
| 188 | Գեներատորի հանում,տեղադրում կամ փոխարինում | | 8000 |
| 189 | Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում | | 14000 |
| 190 | Գեներատորի փոկանիվի փոխարինում | | 3600 |
| 191 | Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում | | 18000 |
| 192 | Ազդանշանի կարգավորում | | 2000 |
| 193 | Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 3000 |
| 194 | Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 3600 |
| 195 | Սարքերի պանելի հանում և տեղադրում | | 60000 |
| 196 | Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 5000 |
| 197 | Առջևի լապտերների կարգավորում | | 5000 |
| 198 | Բռնկման կոճղեքի հանում և տեղադրում | | 7200 |
| 199 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | | 12000 |
| 200 | Ապակեմաքրիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 7200 |
| 201 | Ապակեմաքրիչի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | | 6000 |

| | | | |
|---|---|---|---|
| 202 | Ապահովիչների փոխարինում | | [illegible] |
| 203 | Ապակեամբարձիչների փոխարինում | | 84[illegible] |
| 204 | Ապակեամբարձիչների շարժիչի փոխարինում | | 8400 |
| 205 | Էլեկտրական տվիչների փոխարինում | | 3600 |
| 206 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | | 3600 |
| 207 | Մարտկոցի փոխարինում | | 1000 |
| 208 | Մարտկոցի կլեմաների փոխարինում | | 500 |
| 209 | Էլ/ կոճակի փոխարինում | | 2400 |
| 210 | Էլեկտրական շտեկերի փոխարինում | | 2000 |
| 211 | Լոքի փոխարինում | | 6000 |
| 212 | Էլ.լարերի վերանորոգում | | 24000 |
| | **11. Ավտոմեքենայի սրահ** | | |
| 213 | Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում | | 6000 |
| 214 | Նստարանի հանում տեղադրում կամ փոխարինում | | 7000 |
| 215 | Նստատեղի վերանորոգում | | 18000 |
| 216 | Սրահի պաստառապատում | | 48000 |
| 217 | Սրահի ձայնամեկուսացում | | 48000 |
| 218 | Ապակիների մգեցում | | 54000 |
| 219 | Դռան փականի փոխարինում | | 6000 |
| 220 | Բեռնախցիկի ճոպանի փոխարինում | | 6000 |
| 221 | Դռան դրսի բռնակի փոխարինում | | 7200 |
| 222 | Դռան ներսի բռնակի փոխարինում | | 6000 |
| 223 | Դռների ռետինների փոխարինում | | 3600 |
| 224 | Դռների ապակիների ռետինների փոխարինում | | 3600 |
| 225 | Դռան պաստառի փոխարինում | | 2400 |
| 226 | Լամպի փոխարինում | | 1800 |
| 227 | Ամրակներ (կլիպս) փոխարինում 1հատ | | 200 |
| 228 | Դիմապակու փոխարինում | | 36000 |
| | **12. Այլ ծառայություններ** | | |
| 229 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում *գին 1 կտորի համար* | | 42000 |
| 230 | Ավտոմեքենայի թափքի հղկափայլեցում *գին 1 կտորի համար* | | 12000 |
| 231 | Եռակցման աշխատանքներ *գին 1սմ (գծ.մ) համար* | | 1200 |
| 232 | Խառատային աշխատանքներ *գին 1 կտորի համար* | | 3600 |
| 233 | Փականագործական աշխատանքներ *գին 1 ժամ աշխատանքի համար* | | 8500 |
| 234 | Ավտոմեքենայի լվացում | | 3000 |
| 235 | Ավտոմեքենայի շարժիչի լվացում | | 3000 |
| 236 | Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում | | 8400 |
| 237 | Անիվի հանում և տեղադրում | | 500 |
| 238 | Անվադողի վերանորոգում | | 1000 |
| 239 | Անվադողի փոխարինում հանում տեղադրումով | | 1000 |
| 240 | Անիվի բալանսավորում | | 1000 |
| 241 | Անիվի վուլց | | 5000 |
| 242 | Ավտոմեքենայի սրահի չոր քիմ մաքրում | | 45000 |
| 243 | Քարշակի ծառայություն *գին 1կմ, համար* | | 500 |
| 244 | Ավտոմեքենայի հագոցի փոխարինում | | 10500 |
| 245 | Ավտոմեքենայի հագոցատակի փոխարինում | | 10500 |
| 246 | Ավտոմեքենայի կողային ապակու փոխարինում | | 7200 |
| 247 | Ավտոմեքենայի հետևի ապակու փոխարինում | | 17000 |

| | | |
|---|---|---|
| 248 | Ավտոմեքենայի հետևի կողային ապակու փոխարինում | 6500 |
| 249 | Ավտոմեքենայի դռան փոխարինում | 5000 |
| 250 | Բամպերի փոխարինում | 10000 |
| 251 | Բամպերի կալոնակի փոխարինում | 2000 |
| 252 | Բամպերի բալկայի փոխարինում | 2000 |
| 253 | Բեռնախցիկի փոխարինում | 5000 |
| 254 | Բեռնախցիկի փականի փոխարինում | 9000 |
| 255 | Բեռնախցիկի ռետինի փոխարինում | 2000 |
| 256 | Դռան պաստառի փոխարինում | 4000 |
| 257 | Հացոցի փականի փոխարինում | 7200 |
| 258 | Ավտոմեքենայի հացոցի պետլիի փոխարինում | 3500 |
| 259 | Բեռնախցիկի զսպանի փոխարինում | 1200 |
| 260 | Բեռնախցիկի մեղմիչի փոխարինում | 2000 |
| 261 | Պաշտպանիչի փոխարինում 1 հատը | 2000 |
| 262 | Ընդամենը ծառայություն | 2,667,000 |
| **Ընթացիկ,միջին և հիմնական նորոգման ընթացքում պահեստամասերի,նյութերի և այլ օժանդակ նյութերի անվանումները օգտագործվող** | | |
| | **1.Շարժիչ** | |
| 1 | Շարժիչի բլոկ | 225000 |
| 2 | Շարժիչի գլխիկ | 240000 |
| 3 | Բարձիկ | 50000 |
| 4 | Շարժիչի գլխիկի միջադիր | 30000 |
| 5 | Շարժիչի միջադիրների կոմպլեկտ | 60000 |
| 6 | Շարժիչի փական դուրս մղող | 12000 |
| 7 | Շարժիչի փական ներս մղող | 12000 |
| 8 | Շարժիչի փականի խտարուկ | 1200 |
| 9 | Փականի զսպանակ | 6500 |
| 10 | Ծնկաձև լիսեռ | 120000 |
| 11 | Ծնկաձև լիսեռի խտաբուկ առջևի | 15000 |
| 12 | Ծնկաձև լիսեռի խտաբուկ հետևի | 18000 |
| 13 | Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ | 30000 |
| 14 | Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ | 30000 |
| 15 | Մխոց | 40000 |
| 16 | Մխոցային օղակներ | 80000 |
| 17 | Մխոցային մատ | 6000 |
| 18 | Ատամնանիվ | 20000 |
| 19 | Շարժիչի կափույր | 36000 |
| 20 | Շարժիչի կափույրի կափարիչ | 8000 |
| 21 | Շարժիչի շղթա | 36000 |
| 22 | Շարժիչի պաշտպանիչ | 8000 |
| 23 | Փոկի ձգիչ | 5000 |
| 24 | Հիդրոձգան | 18000 |
| 25 | Հրիչ | 6000 |
| 26 | Շարժիչի հիդրոհրիչ | 14000 |
| 27 | Շարժիչի կալուն | 5000 |
| 28 | Շարժիչի հանդարտիչ | 20000 |
| 29 | Շարժիչի հոլովակ | 26000 |
| 30 | Շարժիչի հոլովակի առանցքակալ | 3000 |
| 31 | Շարժիչի առջևի կափարիչ | 40000 |
| 32 | Շարժիչի վերևի կափարիչ | 27500 |
| 33 | Շարժիչի վերևի կափարիչի միջադիր | 13000 |

| | | | |
|---|---|---|---|
| 34 | Թափանիվ | | 8 |
| 35 | Շարժաթև | | 30 |
| 36 | Առամնանիվ բաշխիչ լիսեռի | | 1800 |
| 37 | Ատամնանիվ ծնկաձև լիսեռի | | 18000 |
| 38 | Փոկանիվ ծնկաձև լիսեռի | | 15000 |
| 39 | Փոկանիվ | | 20000 |
| 40 | Սուխարիկ փականի | | 1000 |
| 41 | Գլխիկի բոլտ | | 1500 |
| 42 | Ծնկաձև լիսեռի բոլտ | | 3000 |
| 43 | Քարտեր | | 38000 |
| 44 | Խուփի ընդարձակման բաքի | | 2000 |
| 45 | Խուփ շարժիչի | | 1000 |
| 46 | Թաթիկ յուղի մղիչի | | 1000 |
| 47 | Բարձիկ փխրուփի | | 36000 |
| 48 | Յուղի մղիչ | | 50000 |
| 49 | Միջադիր յուղի մղիչի | | 3000 |
| 50 | Յուղի ծորակ | | 2000 |
| 51 | Շարժիչի յուղի արանքաչափիչ | | 4000 |
| 52 | Շարժիչի յուղի արանքաչափիչի իրան | | 2400 |
| 53 | Կափույրի միջադիր | | 6000 |
| 54 | Քարտերի միջադիր | | 6000 |
| 55 | Շարժիչի բաշխիչ լիսեռ | | 180000 |
| 56 | Բ/ լիսեռի խտաքուկ | | 6000 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | |
| 57 | Յուղ շարժիչի հանքային, *1 լիտր* | | 3000 |
| 58 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, *1 լիտր* | | 3800 |
| 59 | Յուղ շարժիչի սինթետիկ, *1 լիտր* | | 5500 |
| 60 | Յուղման համակարգի լվացման հեղուկ *1 լիտր* | | 2000 |
| 61 | Յուղի զտիչ | | 3500 |
| 62 | Յուղի ռադիատոր | | 35000 |
| 63 | Վառոցքի կոճ | | 55000 |
| 64 | Արտածման կալեկտոր աջ | | 36000 |
| 65 | Արտածման կալեկտոր ձախ | | 28000 |
| 66 | Ներածման կալեկտոր աջ | | 36000 |
| 67 | Ներածման կալեկտոր ձախ | | 22000 |
| 68 | Արտածման կալեկտորի աջ միջադիր | | 10000 |
| 69 | Արտածման կալեկտորի ձախ միջադիր | | 10000 |
| 70 | Ներածման կալեկտորի աջ միջադիր | | 10000 |
| 71 | Ներածման կալեկտորի ձախ միջադիր | | 10000 |
| 72 | Վառոցքի մոմ | | 5800 |
| 73 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանց | | 5000 |
| 74 | Բենզոմղիչ | | 94000 |
| 75 | Բենզոբաք | | 52000 |
| 76 | Ինժեկտորի բոցամուղ բենզինով շարժիչի | | 43000 |
| 77 | Բոցամուղի խտաքուկ | | 2200 |
| 78 | Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման | | 27000 |
| 79 | Վառելանյութի խողովակ | | 16000 |
| 80 | Օդի զտիչ | | 6000 |
| 81 | Օդի ծախսաչափիչ | | 92000 |
| 82 | Օդի զտիչի փողրակ | | 5000 |
| 83 | Յուղի տվիչ | | 9800 |
| 84 | Բաշխիչ լիսեռի տվիչ | | 52000 |
| 85 | Օդի ծախսի տվիչ | | 68000 |

| | | |
|---|---|---|
| 86 | Արագաչափի տվիչ | 28000 |
| 87 | Հովհարի տվիչ | 19000 |
| 88 | Ջրի տվիչ | 24000 |
| 89 | Բենզոբաքի տվիչ | 40000 |
| 90 | Ղեկավարման համակարգիչ | 120000 |
| 91 | Պարապ ընթացքի տվիչ | 48000 |
| 92 | Թթվածնի տվիչ | 50000 |
| 93 | Օդազտիչի իրան | 15000 |
| 94 | Մաքրելու հեղուկ ABRO | 2500 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | |
| 95 | Հովհար | 30000 |
| 96 | Հովհարի շարժիչ | 48000 |
| 97 | Հովհարի թևանիվ | 24000 |
| 98 | Ռադիատոր | 170000 |
| 99 | Ընդարձակող բաքի փական | 8000 |
| 100 | Ընդարձակող բաք | 30000 |
| 101 | Թերմոստատ | 19000 |
| 102 | Ջրի մղիչ | 76000 |
| 103 | Ջրի մղիչի միջադիր | 2000 |
| 104 | Սառեցման հեղուկ *1 լիտր* | 3500 |
| 105 | Չսառչող հեղուկ ապակիների համար | 2000 |
| 106 | Ձգիչ հոլովակի | 5000 |
| 107 | Փոկ մեծ | 27000 |
| 108 | Հովացման համակարգի ռետինե խողովակ | 15000 |
| 109 | Ծորակ | 9000 |
| 110 | Փոկանիվ գեներատորի փոկի | 4000 |
| 111 | Միջադիր թերմոստատի | 500 |
| 112 | Խլարարի ներդիր | 5000 |
| 113 | Խլարարի կախոց | 6000 |
| 114 | Խլարարի խողովակ | 6000 |
| 115 | Կրոնշտեյն | 6000 |
| 116 | Խլարարի անուր (Խամուտ) | 1500 |
| 117 | Խլարար | 150000 |
| 118 | Շարժիչ վառարանի | 40000 |
| 119 | Վառարանի ռադիատոր | 60000 |
| 120 | Կոնդիցիոների կոմպրեսոր | 62000 |
| 121 | Կոնդիցիոների ռադիատորի փողրակ | 4000 |
| 122 | Առանցքակալ կոնդիցիոների | 12000 |
| 123 | Կոնդիցիոների ռադիատոր | 50000 |
| 124 | Կոնդիցիոների յուղ 1 լ | 6000 |
| 125 | Կոնդիցիոների կալունակ | 2000 |
| | **ՓՏ** | |
| 126 | Հերմետիկ | 3500 |
| 127 | Ավտոմատ փոխանցման տուփ | 180000 |
| 128 | ԱՓՏ յուղ *1 լիտր* | 9000 |
| 129 | ԱՓՏ-ի պատյան | 60000 |
| 130 | ԱՓՏ-ի կոնվերտ | 120000 |
| 131 | ԱՓՏ-ի յուղի զտիչ | 30000 |
| 132 | ԱՓՏ-ի սոլենոիդ | 40000 |
| 133 | ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու | 120000 |
| 134 | ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | 80000 |
| 135 | Ատամնանիվ ԱՓՏ-ի | 30000 |
| 136 | Յուղի մղիչ խցուկ ԱՓՏ-ի | 1000 |

| | | |
|---|---|---|
| 137 | Յուղի մղիչ ԱՓՏ-ի | 6[illegible] |
| | **7. Կախոց** | |
| 138 | Տրավերս | 92000 |
| 139 | Կրոնշտեյն | 10000 |
| 140 | Անվակունդ | 96000 |
| 141 | Անվակունդի խցուկ | 8000 |
| 142 | Անվակունդի ներքին առանցքակալ | 28000 |
| 143 | Անվակունդի արտաքին առանցքակալ | 28000 |
| 144 | Հետևի անվակունդի առանցքակալ | 4000 |
| 145 | Հարվածամեղմիչի թասակ | 28000 |
| 146 | Զսպանակ | 18000 |
| 147 | Առջևի հարվածամեղմիչ | 92000 |
| 148 | Հարվածամեղմիչի փոշեթիկնոց | 19000 |
| 149 | Հարվածամեղմիչի վռան | 5000 |
| 150 | Ներքևի լծակ | 80000 |
| 151 | Ներքևի լծակի վռան | 15000 |
| 152 | Գնդե հողակապ | 30000 |
| 153 | Առջևի կայունարար | 54000 |
| 154 | Առջևի կայունարարի վռան | 8000 |
| 155 | Առջևի կայունարարի կանգնակ | 18000 |
| 156 | Հետևի զսպանակ | 1200 |
| 157 | Հետևի ցնցամեղմիչ | 80000 |
| 158 | Հետևի մետաղաձող (շտանգա) | 30000 |
| 159 | Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան | 12000 |
| 160 | Հետևի անկյունագծային լծակ | 40000 |
| 161 | Անկյունագծային լծակի վռան | 12000 |
| 162 | Հետևի կայունարարի վռան | 8000 |
| 163 | Հետևի կայունարար | 30000 |
| 164 | Անիվը ամրացման հեղույս 1 հատ | 2400 |
| 165 | Քսայուղ Լիտոլ 0.5կգ | 2500 |
| 166 | Վերևի կամ ներքևի հարվածիչ ռետինե բարձիկ | 7500 |
| 167 | Անվաբացքի հեղույս 1 հատ | 5000 |
| 168 | Անվակունդի դարձովի կանգնակ /կուլակ/ | 34000 |
| 169 | Զսպանակի մեկուսացնող ռետինե միջադիր | 4000 |
| 170 | Հողակապի փոշեթիկնոց (փպլՏս չՐՈՎՈՑՈ) | 19000 |
| 171 | Հողակապի վերանորոգման հավաքածու | 1000 |
| 172 | Քսայուղ Շռուս 0.5 կգ | 4500 |
| 173 | Մեղմիչի ամրացման կալունակ | 2400 |
| 174 | Մետաղաձողի հեղույս | 1200 |
| 175 | Գնդե հողակապի կեղտապաշտպան ծածկոց սիլիկոնե | 1200 |
| 176 | Պահպանիչ խուփ | 1000 |
| | **8. Ղեկային մեխանիզմ** | |
| 177 | Ղեկային կալուն | 150000 |
| 178 | Ղեկային կալունի առանցքակալ | 15000 |
| 179 | Ղեկային կալունի վերանորոգման կոմպլեկտ | 40000 |
| 180 | Ղեկային կալունի խաչուկ | 42000 |
| 181 | Հիդրոուժեղարարի փոկ | 20000 |
| 182 | Հիդրոուժեղարարի պոմպ | 120000 |
| 183 | Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ | 24000 |
| 184 | Ղեկային ձող | 3000 |
| 185 | Ղեկային ձողի ծայրակալ կ-տ | 18000 |

| | | | |
|---|---|---|---|
| 186 | Աջ կամ ձախ ձգան | | 24000 |
| 187 | Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր | | 8000 |
| 188 | ՂԿ արորիկ | | 12000 |
| 189 | ՂԿ որդնակ | | 1500 |
| 190 | ՂԿ խցուկ | | 6000 |
| 191 | ՂԿ հիդրոուժեղարարի բարձ.ճնշման խողովակ | | 60000 |
| 192 | ՂԿ հիդրոուժեղարարի ցածր.ճնշման խողովակ | | 50000 |
| 193 | ՂԿ ելուստ (դուրուկ) | | 6000 |
| 194 | ՂԿ ձողի տեղաշարժի մեխանիզմ | | 3000 |
| 195 | Հիդրոուժեղարարի յուղի տարա | | 10000 |
| 196 | Հիդրոուժեղարարի յուղի տարայի կափարիչ | | 4800 |
| | **9. Արգելակային համակարգ** | | |
| 197 | Գլխ. գլան | | 90000 |
| 198 | Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | | 3600 |
| 199 | Վակուումային ուժեղարար | | 180000 |
| 200 | Բանվ. գլան | | 20000 |
| 201 | Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | | 1200 |
| 202 | Արգելակային փողրակ | | 30000 |
| 203 | Սուպպորտ | | 30000 |
| 204 | Արգելակային հեղուկ | | 2000 |
| 205 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | | 34000 |
| 206 | Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | | 21000 |
| 207 | Առջևի արգելակային սկավառակ | | 76000 |
| 208 | Հետևի արգելակային սկավառակ | | 69000 |
| 209 | Ձեռքի արգելակի ճոպան | | 28000 |
| 210 | Վակուումային ուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ | | 6000 |
| 211 | Ձեռքի արգելակի լծակ | | 23000 |
| | **10. Էլեկտրասարքավորում** | | |
| 212 | Գեներատոր | | 196000 |
| 213 | Գեներատորի դիոդային կամրջակ | | 38000 |
| 214 | Գեներատորի ռելե | | 35000 |
| 215 | Գեներատորի առանցքակալ | | 11000 |
| 216 | Գեներատորի խարիսխ | | 18000 |
| 217 | Գեներատորի խարիսխի հետևի պլաստմաս | | 1000 |
| 218 | Գեներատորի առջևի իրան | | 6000 |
| 219 | Գեներատորի ետևի իրան | | 3600 |
| 220 | Գեներատորի փաթույթ | | 15000 |
| 221 | Գեներատորի փոկանիվ | | 5000 |
| 222 | Գեներատորի կալունակ | | 1000 |
| 223 | Գեներատորի կոլեկտոր | | 2000 |
| 224 | Ստարտեր | | 150000 |
| 225 | Ստարտերի ռելե | | 30000 |
| 226 | Ստարտերի ածուխ | | 20000 |
| 227 | Մենարկիչի առջևի իրան | | 8000 |
| 228 | Մենարկիչի ետևի իրան | | 8000 |
| 229 | Մենարկիչի բրոնզապատ վռաններ | | 3600 |
| 230 | Մենարկիչի խարիսխ | | 20000 |
| 231 | Բենդեքս | | 27000 |
| 232 | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ) | | 36000 |
| 233 | Առջևի լապտեր | | 105000 |
| 234 | Հետևի լապտեր | | 65000 |
| 235 | Հակամշուշային լապտեր | | 35000 |

| | | | |
|---|---|---|---|
| 236 | Արգելակային լապտեր | | 2[illegible] |
| 237 | Խցիկի լապտեր | | 40 |
| 238 | Խցիկի լապտերի լամպ | | 20 |
| 239 | Արգելակային լապտերի լամպ | | 38 |
| 240 | Առջևի թարթիչ լապտերի լամպ | | 28 |
| 241 | Հետևի թարթիչի լապտերի լամպ | | 28 |
| 242 | Հետևի լապտերի լամպ | | 30 |
| 243 | Հակամշուշային լապտերի լամպ | | 110 |
| 244 | Առջևի լապտերի լամպ | | 425 |
| 245 | Էլեկտրական անջատիչ | | 60 |
| 246 | Էլեկտրական տվիչ | | 300 |
| 247 | Ապակեմաքրիչ | | 180 |
| 248 | Բռնկման կոճակ | | 400 |
| 249 | Էլեկտրալարերի գլխավոր խուրց | | 800 |
| 250 | Էլեկտրալարերի երկրորդային խուրց | | 500 |
| 251 | Վառոցքի մոմի ծայրակալ | | 110 |
| 252 | Դռան կողպեք | | 270 |
| 253 | Ազդանշան | | 150 |
| 254 | Ապակելվացիչի բաչոկ | | 180 |
| 255 | Ապակելվացիչի շարժիչ | | 210 |
| 256 | Ցուցիչ պրիբոր | | 980 |
| 257 | Վառելիքի բաքի չափիչ | | 680 |
| 258 | Լոք | | 180 |
| 259 | Բաքից դուրս եկող գազերի տվիչ | | 50 |
| 260 | Օդի ծախսի տվիչի ռետինե խողովակ | | 270 |
| 261 | Դռների կենտրոնական փական | | 680 |
| 262 | Հայելի կողային | | 480 |
| 263 | Ազդանշանային համակարգ | | 300 |
| 264 | Դռան ապակու ամբարձիչ | | 450 |
| 265 | Դռան ապակու էլեկտրաամբարձիչի շարժիչ | | 450 |
| 266 | Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր *1 կտորի վերանորոգման համար* | | 150 |
| | **Թափք** | | |
| 267 | Հացոց | | 900 |
| 268 | Հացոցի ճոպան | | 120 |
| 269 | Բեռնախցիկի ծածկոց | | 900 |
| 270 | Դուռ | | 900 |
| 271 | Դռան ներսի բռնակ | | 150 |
| 272 | Դռան դրսի բռնակ | | 250 |
| 273 | Առջևի բամպեր | | 800 |
| 274 | Հետևի բամպեր | | 800 |
| 275 | Բեռնախցիկի կողպեք | | 300 |
| 276 | Հացոցի պետլի | | 150 |
| 277 | Բեռնախցիկի ցսպան | | 40 |
| 278 | Բեռնախցիկի մեղմիչ | | 120 |
| 279 | Լանժերոն | | 299 |
| 280 | Պաշտպանիչ | | 250 |
| 281 | Արկա ներսի | | 200 |
| 282 | Արկա դրսի | | 200 |
| 283 | Դորգիկ կ-տ | | 400 |
| 284 | Ֆարթուկ | | 240 |
| 285 | Բամպերի կալունակ | | 50 |
| 286 | Բամպերի բալկա | | 240 |

| | | |
|---|---|---|
| 287 | Դռան ռեզին կ-տ | 30000 |
| 288 | Բեռնախցիկի ռեզին | 20000 |
| 289 | Դիմապակու ռեզին | 10000 |
| 290 | Դիմապակի | 80000 |
| 291 | Դռների ապակիների ռեզին | 30000 |
| 292 | Դռան պաստառ կ-տ | 40000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Բարձրաստիճան պաշտոնատար անձանց
էթիկայի հանձնաժողովի աշխատակազմ
ք., Երևան, Բաղրամյան 24
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011019057
ՀՎՀՀ 00171676
Աշխ.ղեկավար

Հ.Թադևոսյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
Իվան Վարդանյան Ա/Ձ
ք.Սիսիան, փ.Սրոտան 4 ք /33
<<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ
հ/հ 16031005222200
ՀՎՀՀ 79809022
Տնօրեն

Ի.Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.